ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ VII ԴԱՐՈՒՄ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ*

Հ. Կ. ԻՍԿԱՆՅԱՆ

VII դարում արաբական արշավանքները քաղաքական լուրջ փոփոխություններ են մտցնում Մերձավոր Արևելքում. ջախջախված Սասանյան պետությունը դադարում է գոյություն ունենալուց։ Բյուզանդական կայսրությունը զրկվում է իր արևելյան գրեթե բոլոր նահանգներից, իսկ նրա մայրաքաղաք Կոստանդնուպոլիսն ընկնում է արաբների կողմից գրավվելու վերահաս սպառնալիքի տակ։ Հայաստանն ավելի քան կէս դար շարունակ դառնում է արաբա-բյուզանդական ռազմական արյունահեղ ընդհարումների ասպարեզ։ Հայ ժողովուրդը, ազատվելով պարսկական տիրապետությունից, կենաց և մահու պայքար է մղում բյուզանդական և արաբական նվաճողների դեմ իր անկախության, ազգային ինքնուրույն գոյության պահպանման համար։

Արաբական նվաճումների առաջին շրջանում տեղի են ունեցել վերին աստիճանի կարևոր հայ-բյուզանդական քաղաքական հարաբերություններ, որոնք հսկայական ազդեցություն են թողել ոչ միայն Հայաստանի ու Բյուզանդիայի, այլև, կարելի է ասել, ամբողջ Մերձավոր Արևելքի տվյալ ժամանակի պատմական իրադարձությունների վրա։ Սույն հոդվածը այդ հարաբերությունների ուսումնասիրման մի փորձ է։

602—628 թթ. պարսկա-բյուզանդական պատերազմն ավարտվում է կայսրության հաղթանակով։ 628 թ. կնքված հաշտության պայմանագրով արևելքում վերահաստատվում է 591 թ. սահմանագիծը, որը, ինչպես հայտնի է, անցնում էր Տփղիս (Թբիլիսի)—Թռեղքի (Թրիալեթի) լեռներ—Խոնավ լեռներ—Բազումի լեռներ—Գեղամա լեռներ—Ազատ գետ—Մակու—Առստավան—Ընձաքիարս լեռ—Մծբին ուղղությամբ[1]։ Հայաստանի մեծ մասը՝ 2/3-ը, նորից մնում է կայսրությանը, որը, սակայն, ի վիճակի չէ ողջ պաշտպանելու երկիրը արևելյան սահմաններում հայտնված նոր նվաճողներից՝ արաբներից։

Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև մղված երկարատև պատերազմների, նրանց անցկացրած հարկային, զինվորական, վարչական և այլ միջոցառումների հետևանքով խիստ նվազել էր Հայաստանի պաշտպանունակությունը։ Բյուզանդիան և Պարսկաստանը, որոնք թուլացել էին ներքուստ, զինվորական անհրաժեշտ ուժեր չունեին Հայաստանում։ Վերջինիս պաշտպանությունը իրականում թողնված էր բախտի քմահաճույքին։ Չէին դադարում ֆեոդալական երկպառակությունները։ Կայուն չէր երկրի կառավարումը թե՛ արևմտյան, և թե՛ արևելյան մասում։

---

* Հանգուցյալ հայագետ Վ. Իսկանյանի այս հոդվածը, որ նրա մեծ աշխատության մի հատվածն է, տպագրության է պատրաստել Ա. Տեր-Ղևոնդյանը։

1 Տե՛ս «Атлас истории СССР», часть I. М., 1948: Հմմտ. Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 114։

Հայաստանի Արևելյան կամ Մարզպանական մասում, որի կենտրոնը Դվինն էր, կառավարում էր Կավատ Բ-ի կողմից նշանակված վերջին մարզպան Վարազտիրոց Բագրատունին (628—633)՝ Ջավիտյան-Խոսրով մականունով, նշանավոր զորավար Սմբատ Շումի որդին։ Վարազտիրոցը Սեբեոս պատմիչի մոտ հաճախ հիշատակվում է նաև «ասպետ» բառով։ Նա իր կառավարման ժամանակ, չնայած Պարսկաստանում տեղի ունեցող խռովություններին, զբաղվում է խաղաղ շինարարական աշխատանքով. «Շինեաց բոլորովին զամենայն աշխարհն Հայոց»,— վկայում է ժամանակակից Սեբեոսը։ Սակայն շուտով խախտվում է խաղաղությունը երկրում։ Վարազտիրոցը հրաժարվում է ենթարկվել Ատրպատականի կառավարիչ, ազդեցիկ իշխան Խոռոխ-Որմիզդին և նրա որդի ու հաջորդ Ռոստոմին, որը պատերազմներում անուն հանած զորավար էր։ Հայաստանի բյուզանդական կառավարիչ Մժեժ Գնունին, օգտվելով հանգամանքից, շարախոսում է մարզպանի հասցեին Ռոստոմի առաջ և ավելի սրում թշնամանքը նրանց միջև։ «Մի կացցէ սա ի Հայս. ապա թէ ոչ՝ խռովութիւն մեծ լինիցի ի մէջ երկոցունց թագաւորացն»[4],— ասում է Մժեժ Գնունին Ռոստոմին։ Խոռոխ-Որմիզդն իր Դարիքպետ եղբորը ուղարկում է Դվին ձմեռելու և մարզպանին ձերբակալելու համար։ Բայց Վարազտիրոցն իրեն համակրող անվանի պարսիկներից լուր ստանալով դավադրության մասին, ընտանիքով փախչում է Տարոն, զորք է հավաքագրում և դիմում Հերակլ I կայսեր (610—641) օգնությանը՝ խնդրելով իրեն ապաստան տալ Բյուզանդիայում։

Պարսիկների դավադրությունը, ինչպես գտնում են, սոսկ առիթ էր 633 թ. Վարազտիրոցի Բյուզանդիա կատարած փախուստի համար։ Իրականում Պարսկաստանի թուլացումը և կայսրության ուժեղացումը՝ Հերակլի օրոք, ստիպում է նրան ընտրելու բյուզանդական կողմնորոշում[5]։

Հերակլ I-ը հանդիսավորապես ընդունում է Վարազտիրոցին «յԱսորեստան՝ յայց աշխարհին», խոստանում է անձեռնմխելի թողնել նրա կյանքը, որոշ ժամանակ պահել իր մոտ, ապա ուղարկել Հայաստան։ Կայսրը Վարազտիրոցին արժանացնում է բյուզանդական պատրիկներից առավել բարձր մեծարանքի, իսկ այնուհետև գնալով Կ. Պոլիս «ետ նմա ապարանս թագաւորականս և գահոյս արծաթի և զանձս բազումս յոյժ»։ Նրա որդին շուտով դառնում է կայսեր սենեկապետի սիրելին[6]։

Վարազտիրոցի և որդու առաջ բացվում են լայն հեռանկարներ բյուզանդական ծառայության մեջ առավել բարձր դիրքի հասնելու համար, բայց հետագա անսպասելի իրադարձությունները խորտակում են նրանց այդ հույսերը։

Հերակլ I-ի որդին՝ Աթալարիկոսը, գահին տիրելու համար հոր դեմ դա-

---

2 Այս հայ իշխանն անվանվել է նաև Վարազ Սահակ (Ed. Dulaurier, Recherches sur la chronologie arménienne, Paris, 1858, էջ 358)։

3 Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 102։

4 Նույն տեղում։

5 Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար («Գիտական ժողովածու», ՍՍՀՄ գիտ. ակադ. հայկ. ֆիլիալի՝ նվիրված Հայաստանում սովետ. իշխ. հաստատման 20-ամյակին, Երևան, 1941), էջ 66։ Կ. Բասմաջյանը Վարազտիրոցի մարզպանության վերջին տարին, հետևաբար նրա անցումը կայսրության կողմը դնում է 634 թ. (տե՛ս «Ժամանակագրական պատմություն Հայոց», «Ամենուն Տարեցույց», Կ. Պոլիս, 1914)։

6 Սեբեոս, էջ 103։

վարչություն է կազմակերպում, մասնակից դարձնելով կայսեր եղբորորդուն՝ Թեոդորոս Մագիստրոսին, Վահան Խոսխոռունուն և քաղաքի մեծամեծներից շատերին։ Նրանց, մեզ անհայտ պատճառներով, միանում է նաև Վարազտիրոցը, բայց դավադիրների խորհրդակցության ժամանակ, որտեղ որոշվում է կազմակերպել հեղաշրջումը, նա հրաժարվում է կայսեր և նրա որդիների սպանությունից[7]։ Խորհրդակցությանը ներկա կուրատորներից[8] մեկի մատնությամբ ի վերջո դավադրությունը բացվում է և բոլորը ձերբակալվելով պատժվում են։ Հերակլ I-ի հրամանով կտրում են դավադրության մասնակիցների քիթը և աջ ձեռքը։ Բացառություն է կազմում միայն Վարազտիրոցը[9]։

Կայսրը հրաժարվում է կատարել Վարազտիրոցին մահապատժի ենթարկելու նրա հակառակորդների պահանջը և հրամայում է նրան կնոջ ու որդիների հետ աքսորել «ի կղզի և ի քաղաքն նեղութեանն»[10] (634 թ.)։ Վարազտիրոցը, ինչպես ենթադրում են, Հերակլի կողմից մեկուսացվել է հավանաբար Աֆրիկայի ափերին մոտ գտնված մի կղզում 635 թ.[11]։

Այժմ Բյուզանդիայի տիրապետության տակ գտնված Հայաստանում տիրող դրության մասին։ Արևմտյան Հայաստանը, որի կենտրոնը Թեոդոսուպոլիս (Կարին) քաղաքն էր, կառավարում էին կայսեր կողմից նշանակված կառավարիչները պատրիկ և կյուրոպաղատ աստիճաններով[12]։ Պարսկա-բյուզանդական պայմանագրից հետո նրա կառավարիչն էր զորավար Մժեժ Գնունին (629—635), որը «Եկն...ի Հայաստան երկրէն, և յինքն կալաւ զամենայն երկիրն ըստ ասացելումն սահմանին»[13]։ Այս վկայությունից պետք է հետևցնել, որ նա է կենսագործել պայմանագրի կետերը, ընդունել սահմանագիծը և ստանձնել երկրի կառավարումը։ Նա աչքի է ընկնում հայ զինվորական և քաղաքական գործիչների հանդեպ ունեցած թշնամանքով և բյուզանդական արքունիքի նկատմամբ իր անսահման նվիրվածությամբ։ Մժեժ Գնունին դաժան հալածանքի է ենթարկում կայսրության թշնամի ներքին ուժերին, և ընդհանրապես, չնայած հայ լինելուն, ամեն կերպ երկրի ու ժողովրդի շահերը զոհաբերել է Բյուզանդիայի շահերին։ Անցնելով իր պաշտոնին, ամեն գնով ձգտել է կատարել Հերակլ կայսեր կամքը՝ իրագործել հայ-բյուզանդական եկեղեցական միաբանությունը՝ հայերի դավանական ձուլումը հույների հետ։

Հերակլը պարսիկներից ձեռք բերած «Խաչափայտը» մեծ հանդիսավորությամբ վերադարձնելով Երուսաղեմ (631 թ. սեպտեմբերի 14-ին), անցնում է

---

7 Նույն տեղում, էջ 103։

8 Կուրատոր կամ կորատոր (լատ. cura — հոգ, հոգատարություն բառից, որ նշանակում է հոգաբարձու) պաշտոնյան Բյուզանդիայում տնօրինել է ցորեն մթերելու, հողաբաշխման, ջրմուղները հսկելու և այլ գործեր։

9 Սեբեոս, էջ 103—104։

10 Նույն տեղում։

11 R. Grousset, Histoire de l'Arménie des origines à 1071, Paris, 1947, էջ 286։

12 Կյուրոպաղատը բյուզանդական բարձր աստիճան էր, որը տրվում էր Արևմտյան Հայաստանի քաղաքացիական կառավարչին և իր պաշտոնական դիրքով համապատասխանում էր Արևելյան Հայաստանի մարզպանին։ Ա. Տեր-Ղևոնդյանը կազմել է VII դարի հայոց իշխանների հետևյալ տախտակը. Մժեժ Գնունի 629—635, Դավիթ Սահառունի 635—639, Թեոդորոս Ռշտունի 639—654, Համազասպ Մամիկոնյան 654—661, Գրիգոր Մամիկոնյան 661—685, Աշոտ Բագրատունի 685—689, Ներսեհ Կամսարական 689—693 (տե՛ս Հայոց իշխանը արաբական տիրապետության ժամանակաշրջանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2)։

13 Սեբեոս, էջ 102։

Սիրիա, ապա մերձեփրատյան նահանգների վրայով՝ Արևմտյան Հայաստան, կանգ առնելով Թեոդոսուպոլիս քաղաքում, որը բյուզանդական կուսակալի աթոռանիստն էր։ Այդ ժամանակ կայսրությանը անհանգստացնում էր հարավից սպառնացող արաբական արշավանքի վտանգը։ Անհրաժեշտ էր եթե ոչ վերացնել, գոնե մեղմացնել պաշտոնական քաղկեդոնական եկեղեցու և բյուզանդական հպատակ ժողովուրդների եկեղեցիների միջև եղած դավանական վեճերն ու ատելությունը։

Ասորիքի Սերգիոս պատրիարքը (610—638), որ ընդունակ և եռանդուն մարդ էր, այդ նպատակով առաջ է քաշում դավանական նոր ձևակերպում, ըստ որի Քրիստոսի մեջ երկու բնություն կա՝ աստվածային և մարդկային, որոնք քանի որ միացած են մեկ անձի մեջ, ուստի կամքը մեկ է[14]։ Այս նոր դավանանքը կոչվում է «մոնոթելիզմ» (միակամություն)։ 626 թ. Կ. Պոլսում գումարված եկեղեցական ժողովը հաստատում է այդ ձևակերպումը։ 634 թ. Սերգիոսը հրապարակում է հայտնի „Ἔκθεσις"-ը, որով միակամությունը հաստատվում է որպես պաշտոնական դավանանք։ Կայսեր և պատրիարքի նպատակն էր վերացնել մոլեռանդ վեճերը եկեղեցու մեջ և միաբանություն ստեղծել քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների միջև, ամրապնդել բյուզանդական տիրապետությունը արևելյան նահանգներում, մանավանդ Փոքր Ասիայում, արաբական սպառնացող վտանգի դեմ[15]։ Կայսրությունը դավանական նոր ձևակերպումն առաջարկում է իր բոլոր ոչ քաղկեդոնիկ հպատակներին, այդ թվում՝ հայերին, որպես ուղղափառ դավանանք։

Հերակլ I կայսրը, այդպիսով, հայերին և ասորիներին առաջարկում է դավանական միություն ոչ թե քաղկեդոնականության հիման վրա, այլ միակամյա դավանության, որը բացարձակ քաղկեդոնականություն չէր, այլ երկու կողմերի մասնակի զիջողությամբ եփեսոսական և քաղկեդոնական դավանությունների միջասահման մի դրություն[16]։

Հակաքաղկեդոնականությունը ուժեղ էր Ատրիքում և Հայաստանում։ Հայերն ու ասորիներն ատում էին բյուզանդական լուծը և դավանաբանական տեսակետից, ինչպես գիտենք, քաղկեդոնիկ եկեղեցու անհաշտ թշնամիներն էին։ Այս երկրներում բյուզանդական տիրապետությունն ամուր չէր արտաքին վտանգի դեմ։ Ուստի Հերակլ կայսրը հատուկ ուշադրություն է դարձնում հայերի և ասորիների վրա։ Եգիպտացիները և ասորիներն ընդունում էին դավանաբանական նոր բանաձևը[17]։ Վերջինս անհրաժեշտ էր պարտադրել նաև հայերին։ Սերգիոս պատրիարքը հավանարար որոշ չափով նախապատրաստել էր այս խնդրի լուծումը։ 623 թ. Հերակլ կայսրը առաջին անգամ Թեոդոսուպոլսում իր գտնվելու ժամանակ խորհրդակցել էր այսպես կոչված «սևերյան» ուղղամիտ միաբնակների՝ Պավել անունով ներկայացուցչի հետ եկեղեցիների միավորման համար և այդ մասին տեղյակ պահել պատրիարքին։ Պավելը, ինչպես գոնում են, Կիպրոսի հայկական գաղութի առաջնորդն էր, չնայած ուրիշները անհավանական են համարում այդ նույնացումը, հիմք ընդունելով այն փաստը, որ հայկական եկեղեցին Սևերիանոսին և նրա հետևորդներին հայտարա-

---

14 С. Шестаков, Лекции по истории Византии, т. I, Казань, 1915, էջ 355։

15 Հմմտ. G. Ostrogorsky, Histoire de l'Etat Byzantin, Paris, 1956.

16 Մ. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 687։

17 Հ. Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրերի պատմության, Վաղարշապատ, 1901, էջ 120։

րել էր հերետիկոս Պավելի հետ վարած բանակցությունները հանգում են նրան, որ Հերակլը Կիպրոսի Արկադիոս episkոպոսի անունով հրապարակում է հրամանագիր՝ դատապարտելով Քրիստոսի մեջ երկու բնության մասին ուսմունքը։ Կիպրոսում հայկական դաղութի առկայությունը՝ հիմնված Մորիկի կողմից Արդանեն մարդից վերաբնակեցրած հայերով, հնարավոր է դարձնում ենթադրելու, որ այնտեղ թյուրիմացություններ են տեղի ունեցել ուղղափառ episkոպոսի և հայերի միջև, որոնք հին կապերը չէին խզել իրենց հայրենիքի հետ[18]։

Բյուզանդական դրամավար Մժեժ Գնունին, դառնալով Արևմտյան Հայաստանի սպարապետ, Հերակլի հանձնարարությամբ առաջարկում է Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսին (630—641) անհապաղ ներկայանալ կայսրին եկեղեցական միություն հաստատելու համար։ Այդ պահանջը հիմնավորվում է նրանով, որ Հայաստանի եկեղեցին նորից միավորվել էր կաթողիկոսի իշխանության տակ։ Եզրի իշխանությունը երկրի արևմտյան մասի հայերի վրա օրինավոր ճանաչվելու համար նա պետք է հաղորդվեր կայսեր հետ, հակառակ դեպքում նա կմնար միայն պարսկական տիրապետության տակ գտնված Հայաստանի կաթողիկոս։ Ուստի Մժեժ Գնունու պահանջը կտրուկ էր ու անառարկելի. «Ասէ ցկաթուղիկոսն ցԵզր՝ երթալ նմա յերկիր սահմանացն Յունաց և հաղորդել աւրինաւք ընդ կայսեր. ապա թէ ոչ՝ արասցուք մեզ այլ կաթուղիկոս. և դու կա՛ց զիշխանութիւնդ քոյ ի Պարսից կողմանէ»[19]։ Մժեժ Գնունու սպառնալիքը ցույց է տալիս, որ Եզր կաթողիկոսն սկզբնական շրջանում խուսափողական դիրք է գրավել և փորձել է ծանր դրությունից դուրս գալու ճանապարհ գտնել[20]։ Դեռևս Մորիկ կայսրը, ինչպես գիտենք, ստեղծել էր նման դրություն։ Հակաթոռ կաթողիկոսության դեպքում Եզրը զրկվելու էր Արևմտյան Հայաստանի նկատմամբ եկեղեցական իշխանությունից։ Մժեժ Գնունու սպառնալիքն ազդում է Եզրի վրա, որը կայսրին է դիմում խնդրելով իրեն ներկայացնել հավատի նոր բանաձևը։ Քաղկեդոնականությունը ընդունելու դեպքում Եզրն իր դեմ դուրս կբերեր հակաքաղկեդոնիկ հայ հոգևորականությանը, բայց Հերակլի և Սերգիոս պատրիարքի դավանական նոր ձևակերպումը զգալիորեն հեշտացրել էր մերձեցումը։ Այսպես կոչված միակամ դավանանքը, որը ո՛չ քաղկեդոնական էր, ո՛չ նեստորական, և ո՛չ էլ միաբնակ (մոնոֆիզիտ), տարբեր մեկնաբանության տեղիք տվեց նրա հետևորդների և հակառակորդների կողմից Բյուզանդիայում և Հայաստանում։

Եզր կաթողիկոսը կայսեր առաջարկի շուրջը խորհրդակցում է Մարզպանական Հայաստանի սպարապետ Թեոդորոս Ռշտունու և այլ նախարարների հետ։ Թեոդորոս Ռշտունին, չնայած հակաքաղկեդոնական էր, մյուս նախարարների հետ ի վերջո համաձայնվում է կայսեր և Եզրի հանդիպմանը, պայմանով, որ կաթողիկոսը պաշտպանի հայոց եկեղեցու իրավունքը։ Եզրն այդ նպատակով իր հետ պետք է տաներ դավանական ուսմունքի հմուտ վարդապետներ Մաթուսաղա Սյունեցուն և Հովհաննես Մայրավանեցուն, որն այդ ժամանակ Դվինում էր՝ որպես Ս. Գրիգոր եկեղեցու փակակալ, և տնօրինում էր կաթողիկոսարանի գործերը։ Բայց այս երկու հոգևորականները, պատճա-

18 Ю. Кулаковский, История Византии, т. III, Киев, 1915, էջ 125։

19 Սեբեոս, էջ 102. հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 77։

20 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 688։

ռարանելով իրենց ստորագրությունը, հրաժարվում են կաթողիկոսին ընկերակցել։ Ուստի Եզրը Դվինից կայսեր մոտ է մեկնում իր հետ տանելով Արտաշատի արքեպիսկոպոս Տիրատուրին, Քրիստափոր Դարունյաց, Մարտիրոս Տողթնյաց, Եպիփան Մամիկոնեից եպիսկոպոսներին, Վարդան Բագարանցուն, Թովմաս Արշարունյաց և Թեոդորոս Քրթենավոր վարդապետներին ու մի քանի ոչ նշանավոր եկեղեցականներին[21]։

Պատմիչներից միայն Սեբեոսն է, որ Եզր կաթողիկոսի կայսեր հետ հանդիպման վայր է համարում «յերկիրն Ասորեստանի»[22], այսինքն՝ Ասորիքը, առանց կոնկրետ նշելու տեղը։ Որոշ պատմաբաններ հիմք են ընդունել այդ տեղեկությունը[23], որը, սակայն, հավանական չէ։ Գրեթե մյուս բոլոր պատմիչների ասելով այդ հանդիպումը տեղի է ունեցել Կարին քաղաքում[24]։ Հայոց եկեղեցու պատմությանը նվիրված ուսումնասիրություններում արժանահավատ է համարվել այս վկայությունը[25]։

Աղբյուրները տարբեր տեղեկություններ են հաղորդում նաև այդ հանդիպման տարեթվի մասին։ «Սա (Հերակլ կայսրը— Վ. Ի.),— ասում է ժամանակակից Անանիա Շիրակացին,— յեւթն եւ ի տասն ամին իւրոյ սպան զԽոսրով եւ դարձոյց զսուրբ խաչըն. եւ ինն եւ տասն ամին (610—19—620) արար ժողով ի Թեոդոսուպաւլիս, որ այժմ ասի Կարնոյ քաղաք, բազում եպիսկոպոսաց, առ Եզրիւ կաթողիկոսիւ Հայոց եւ Հոռոմոց, եւ Ասորւոց, յորում Հայք Քաղկեդոնիկք եղեն, եւ զժողովն ընկալան»[26], իսկ այլ ձեռագրում ասված է. «Սա (Հերակլ կայսրը— Վ. Ի.) յեւթն եւ ի տասն ամին (610+17=627) արար ժողով ի Թեոդոսուպաւլիս»[27]։

Հովհան Իմաստասերի ասելով «սա (Հերակլ կայսրը— Վ. Ի.) ի ԺԵ (610+15=625) ամի թագաւորութեանն իւրոյ սպան զԽոսրով արքայն Պարսից, և դարձոյց զսուրբ խաչն, իսկ ապա զկնի ԸԺ (610+18=628) ամի արար ժողով ի Կարնոյ քաղաքի»[28]։

Ուշագրավ է նաև Narratio de rebus Armeniae կոչված գործի (գրվել է շուրջ 700 թ.) անհայտ հեղինակի հետևյալ վկայությունը. «Խոսրովի մահվան Դ(4) տարին Հերակլի թագավորության ԻԳ (23) (610+23=633) տարին (Հերակլը) գալով Մեծ Հայք հրամայեց Թեոդոսուպոլսում մեծ ժողով գումարել՝ բոլոր եպիսկոպոսների և վարդապետների, կաթողիկոս Եզրի և բոլոր ազատների մասնակցությամբ, քննելու և եզրակացության հանգելու համար

21 Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1785, էջ 328։

22 Սեբեոս, էջ 102։

23 Кулаковский, նշվ. աշխ., էջ 126, 131, Լեո, Երկերի ժողովածու, 2, էջ 300 և այլն։

24 Տե՛ս Ա. Արրահամյան, Շիրակացու մատենագրություն, Երևան, 1944, էջ 397։ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 221։ «Narratio de rebus Armeniae» (տե՛ս «Բանբեր Մատենադարանի» № 6, Երևան, 1962), էջ 468։ Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 87։ Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յազգս զիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, 1893, էջ 73։ Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն, Յերուսաղէմ, 1871, էջ 300։ Կիրակոս Դանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 54 և այլն։

25 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 690։

26 Անանիա Շիրակացի, էջ 397։

27 Տե՛ս «Անանուն ժամանակագրութիւն», Վենետիկ, 1904, էջ 76։

28 Տե՛ս «Գիրք թղթոց», էջ 221։

Քրիստոսի՝ մեր աստծո երկու բնությունների և Քաղկեդոնի ժողովի հարցը շուրջը։

Երեսուն օր նրանք քննեցին այդ հարցը, և հայերը համոզվեցին (սուրբ հայրերի) գրքերից և իրենց ձեռքով ստորագրեցին ու երդվեցին այլևս այդ մասին երբեք չհակառակել»[29]։

Այլ աղբյուրների վկայության համաձայն եկեղեցական ժողովը Կարինում դումարվել է Հերակլի 9-րդ տարում (610+9=619)[30], ՈԽ (640) թվականին[31], Եղրի կաթողիկոսության երրորդ տարում[32] (632), ՁԷ (638) թվականին[33]։

Հերակլ կայսրը, ինչպես հաղորդում են աղբյուրները, հայերի և ասորիների հետ եկեղեցական միաբանության հարցով զբաղվել է իր պարսկական արշավանքները հաղթականորեն ավարտելուց (628) և «Խաչափայտը» Երուսաղեմ վերադարձնելուց հետո։ Ուստի մեզ հավանական է թվում Narratio de rebus Armeniae-ի տվյալը՝ 633 թ.։

Եղր կաթողիկոսը, ուսումնասիրողների կարծիքով, Հերակլ կայսեր հետ հանդիպել է հավանաբար 633[34] կամ 633—634 թթ.[35]։

Սեբեոսը Հերակլ կայսեր և Եղր կաթողիկոսի միջև տեղի ունեցած հարաբերությունների մասին հաղորդում է, որ Եղրն սկզբում չի կարողանում մեկնել Երկրիս և նրա խնդրանքով կայսրն ուղարկում է դավանական նոր բանաձևը («Զենոնարկ հաւատոյ»), որտեղ նզովվում էին Նեստորը և մյուս բոլոր աղանդավորները, բայց ոչ Քաղկեդոնի ժողովը[36]։ Կաթողիկոսը գնում է ու հանդիպում կայսրի հետ, նրանից որպես պարգև ստանում է Կողբի աղահանքը և մեծ շուքով վերադառնում Հայաստան[37]։ Միաբնակ Միխայել Ասորի պատրիարքը դատապարտում է Եղրի այդ քայլը, վերագրելով այն նրա ագահությանը և անմտությանը. «Եւ ժողովեցան 'ի Թէոդոպոլիս և դարձոյց (Հերակլ կայսրը— Վ. Ի.) զբազումս 'ի Հայոց յաղանդն իւր 'ի ձեռն Եղրի, զոր կաշառեաց զագահութիւն նորա և խաբեաց զանմտութիւն նորա»[38]։

Ավելի ուշ ժամանակի պատմիչները, մանավանդ Ստեփանոս Օրբելյանը, այդ իրադարձության պատմությունը հաղորդում են համեմատաբար ընդարձակ կերպով և վիպական դունազարդմամբ։

Ըստ Ստ. Օրբելյանի, կաթողիկոսը կայսրին ընդդիմանալու պատասխան չի գտնում և համաձայնվում է միաբանել բյուզանդական եկեղեցու հետ[39]։

Դավանական նոր բանաձևը բոլորն ընդունում, ստորագրում և կայսրին են նվիրակայանում։ Ուրախացած Հերակլը հրամայում է հանդիսավոր արարողու-

29 «Narratio de rebus Armeniae», էջ 468։

30 Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 249։

31 Սամվել Անեցի, էջ 80։

32 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 114։

33 «Անանուն ժամանակագրություն» (XIII դ.), տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հատ. I, Երևան, 1951, էջ 24։

34 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 686—687։ Pargoire, l'Eglise Byzantine de 527 a 847, Paris, 1905, էջ 183։

35 Լեո, Երկերի ժողովածու, 2, էջ 300։

36 Սեբեոս, էջ 102։

37 Նույն տեղում, հմմտ. «Գիրք թղթոց», էջ 221—222։ Անանիա Շիրակացի, էջ 397։ Ս. Անեցի, էջ 79—80։ Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 86։

38 Միխայել Ասորի, էջ 300։

39 Օրբելյան, էջ 117—118։

թյուն կատարել Կարինի եկեղեցու մեջ և պատարագի ժամանակ կայսրն ու կաթողիկոսը, նմանապես նրանց հետ գտնված հույները և հայերը միասին հաղորդվում են, այսինքն հաղորդությունն ընդունում են միևնույն սկիհից։ Մինչև հիմա Կարինի մայր եկեղեցուն կից կա Միքայել սուրբ Աստվածածին կոչված փոքրիկ մի եկեղեցի. ս.լ., ինչպես կարծում են, այդ հայ-հունական միաբանության հիշատակ է և չնայած վրան որևէ արձանագրություն չկա, բայց Եզրի ժամանակի չափ հին լինելու նշաններ ունի[40]։

Կաթողիկոսը և հայ հոգևորականությունը, հաղորդվելուց բացի, նաև «ետուն ձեռնարկ միաբանութեան արքայի խնդրեցին և զՔաղկեդոնին զոր եւ թագաւորն ոսկեգիր մագաղաթաւ պարգև Եզրի զերրորդ մասն գիւղաքաղաքին Կողբայ և զաղսն բովանդակ[41]։ Ով անմիտ և չար վաճառին։ Եւ այնպէս մեծամեծ փառօք և հրեկլի պարգևօք հրաժարեալք յարքայէն՝ դարձան ի Դվին կապուտ, կողոպուտք ի ճշմարիտ հաւատոյն։ Եւ անդ կամեցան ժողովով հաստատել զնոր օրէնսն զոր առին»[42],— դառնացած վերջափակում է այդ գործարքը հայրենասեր պատմիչը։

Մաթուսաղա Սյունեցին ձեռնադրվում է Սյունիքի եպիսկոպոս և միանում է բյուզանդական եկեղեցու հետ Եզրի կնքած գործարքին, մինչդեռ Հովհաննես Մայրավանեցին խիստ ընդդիմանում է կաթողիկոսին, ասելով. «Յիրաւի կոչեցաւ Եզր զի եղր և վախճան եղեր հաւատոյ ուղղափառութեան»[43], բայց խիստ հալածվում է ու քաշվում Մայրավանք՝ կաթողիկոսից ստանալով Մայրագոմեցի մականունը։ Դվինում գումարված եկեղեցական ժողովը հաստատում է, «զնոր օրէնսն» և «Հայք կացին ի նոյն յաղանդն յաւուրս 6 կաթողիկոսաց ամս 85, մինչ... Յովհան Օձնեցին»[44]։

Ստեփանոս Օրբելյանը այնուհետև մեջբերում է նաև «Թուղթ Մաթուսաղայի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեաց հրամանաւ Տեառն Եզրի՝ Հայոց կաթողիկոսի. եւ այլ եպիսկոպոսաց Հայոց, առ Թագաւորն Հերակլ վասն հաւատոյ»[45], որտեղ կայսեր տված հավատի թուղթը համարվում է ճշմարիտ և ուղիղ։

633—634 թթ. մինչև Հովհաննես Օձնեցու կաթողիկոսությունը (717—728), հայոց եկեղեցին հետևել է քաղկեդոնական ծեսերին։ Նույն կաթողիկոսը, խոսելով Խոսրով II-ի դեմ (590—628) Հերակլ I կայսեր տարած հաղթանակի մասին, այնուհետև ասում է. «Իսկ նորա հաստատեալ զաթոռ հայրապետութեան Եզրի զՀայք քաղկեդոնիկ արար, վասն զի կաթողիկոսք յԵզրէ նստեալք մինչև ցայժմ (այսինք մինչև Հովհաննես Օձնեցու կաթողիկոսությունը— Վ. Ի.) նոյն խոստովանութեամբ Քաղկեդոնի վարեալ լինէին առ ի յաստեացս»[46]։

Հերակլ կայսեր դավանական նոր ձևակերպումը և եկեղեցական քաղաքա-

---

40 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 692։

41 Վարդան պատմիչի մի ձեռագիր օրինակի համաձայն Եզրը Կողբի հետ նաև «Առեալ ղաղտքն» կամ «ղաղցրն» (էջ 86), բայց, ըստ Օրմանյանի, պետք է ընդունել, որ դա գրչագիրներից աղավաղված միևնույն «զաղսն» է (Ազգապատում, էջ 692)։

42 Ստ. Օրբելյան, էջ 118։

43 Նույն տեղում, էջ 118։

44 Նույն տեղում, էջ 118—119։

45 Նույն տեղում, էջ 119—130։

46 «Գիրք թղթոց», էջ 223։

կանությունը ի վերջո նպատակին չհասան։ Հպատակ ժողովուրդների և բյուզանդական պաշտոնական եկեղեցու միջև դավանական միություն չստեղծվեց և ատելությունն ու երկպառակությունը շարունակվեց։ Դրա գլխավոր պատճառը այլադավանությունը չէր, այլ նվաճող-կեղեքողի և նվաճվող-կեղեքվողի միջև եղած անհաշտելի հակասությունը, որը շարունակվեց և հնարավոր չէր վերացնել։ Կայսրության կողմից միակամ դավանանքի ստեղծումը, որը յուրատեսակ զիջում էր նրա հպատակ այլադավան (նեստորական, միաբնակ և այլն) հպատակներին, առաջացրեց բյուզանդական քաղկեդոնիկ եկեղեցու խիստ դժգոհությունը։ Բյուզանդիայում միակամ դավանանքին, իր հերթին, հետևեցին շատ բները, և կայսրությունը ստիպված հրաժարվեց եկեղեցական նման քաղաքականությունից։

Եզր կաթողիկոսի և Հերակլ կայսեր եկեղեցական գործարքն էլ Հայաստանում քիչ ավելի ուշ դիտվեց որպես քաղկեդոնականության ընդունում։

Հայ հոգևորականությունը, ինչպես վկայում է Միքայել Ասորին, ի վերջո մերժում է Եզրի գործարքը կայսեր հետ. «Այլ ոչ հնազանդեցան նմա (այսինքն՝ Եզրին— Վ. Բ.) վանորայքն արեւելից և իմաստուն եպիսկոպոսքն և զբազում աշխարհս պահեցին յուղղափառութիւն անշարժելիս, մինչեւ յաղթեցին ճշմարիտքն և բարձաւ աղանդն չարութեան՝ ի ձեռն սքանչելագործ և իմաստուն առնն Աստուծոյ Յովհաննու Օձնեցւոյն, որ յետ ութսուն և չորս ամաց տգիտաբար հաւանելոյն Եզրայ, Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսն Հայոց Մեծաց, ալայծառ կարգօք զարդարեաց զեկեղեցի աղօթիւք սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին և սուրբ որդւոցն իւրոց»[47]։

Հայ պատմիչները, որպես կանոն, դատապարտում են Եզրի՝ կայսրությանը կատարած դավանական վտանգավոր զիջումը և այդ սովորաբար հանդիսանում են կաթողիկոսի տգիտության արդյունք[48]։ Միայն Սեբեոսն է հաղորդում, թե Եզրը կայսեր մոտից «դարձաւ մեծաւ շքով ի տուն իւր» և «սա էր այր խոնարհ և հեզ»[49]։ Եզրի և Հերակլի կնքած հայ-բյուզանդական եկեղեցական միության մասին մենք որևէ գրավոր փաստաթուղթ չունենք։ Կարծվում, ինչպես իրավացիորեն գտնում են, իսկական եկեղեցական ժողով չի գումարվել, չնայած որոշ աղբյուրներ վկայում են դրա օգտին[50], նիստեր տեղի չեն ունեցել, այլ, հրականում, հույները կայսեր հրամանի ձևով նոր ոգով ձևակերպված դավանական գիր են ներկայացրել քաղաքում գտնված մի քանի հոգևորականների՝ կաթողիկոսին, նրա հետ եղած չորս եպիսկոպոսի և երեք վարդապետի, որոնք քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով ստիպված համակերպվել են բյուզանդական սպառնալից պահանջին[51]։

47 Միխայել Ասորի, էջ 301։ Հմմտ. Ստ. Ասողիկ, էջ 102—103։

48 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 77—78։ Ստ. Ասողիկ, էջ 87։ Վարդան, էջ 86։ Ստ. Օրբելյան, էջ 114—119։

49 Սեբեոս, էջ 99—100։

50 «Գիրք թղթոց», էջ 221։ Վարդան, էջ 115։

51 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 693—694։ Մեզ միանգամայն անհավանական է թվում Մ. Օրմանյանի այն ենթադրությունը, թե Սեբեոսը արդարացնում է Եզրին, որովհետև «Մի գուցե ինքն ալ Եզրի խորհրդակիցներեն մեկը եղած ըլլա» (էջ 692)։ Սեբեոսն իր «Պատմության» մեջ իրեն միշտ ցուցաբերում է հակաքաղկեդոնական և հայ-բյուզանդական եկեղեցական միության անհաշտ թշնամի։

կանգնում է Հովհաննես Մայրավանեցի վարդապետը, անհաշտ պայքար մղելով կաթողիկոսի և նրա կողմնակիցների դեմ[52]։ Դժգոհությունը այնքան խիստ էր, որ Եղբը Դվինում չմնաց, այլ, Սեբեոսի ասելով, որոշ ժամանակ նա «ներստեր ի մէջ բանակին Յունաց, մինչև զաւրավարին հաճոյանալ ըստ կամաց նորա։ Կարգէր զկարգս զինուորացն և բաշխումն շտեմարանաց ի վերայ ամենայն երկրին»[53]։

Պրոֆ. Լեոն սխալմամբ կարծում է, թե այդ զորավարը Թեոդորոս Ռշտունին էր[54]։ Մինչդեռ վերջինս այդ ժամանակ սպարապետ էր Հայաստանի Արևելյան մասում։ Պատմիչի խոսքը իրականում վերաբերում է Մժեժ Գնունուն, որն իրոք Արևմտյան Հայաստանում գտնված բյուզանդական բանակի հրամանատարն էր։

Մժեժ Գնունին միջամտում էր Մարզպանական Հայաստանի ներքին գործերին և, ինչպես տեսանք, սուր թշնամանքի մեջ էր նրա մարզպան Վարազտիրոցի հետ։ Արևմտյան Հայաստանում նա հալածում էր իր հակառակորդ հայ իշխաններին։ Նա Դավիթ Սահառունուն՝ Արևելյան Հայաստանի նախկին մարզպանին, մեղադրելով Հերակլ կայսեր դեմ կազմակերպված դավադրությանը մասնակից լինելու մեջ, ձերբակալում է և կապանքների մեջ ուղարկում Կ. Պոլիս։ Բայց հայ իշխանը ճանապարհին արձակում է իր կապանքները, սպանում իրեն ուղեկցող պահապաններին, վերադառնում հայրենի երկիրը, կանգնում զորքի գլուխը և սպանում զորավար Մժեժ Գնունուն ու Վարազ Գնել Գնունուն։ «Եւ առ յինքն զաւրավարութիւնն կամակցութեամբ և սիրով ամենայն զաւրացն»[55]։ Կայսրությունն սկսված արաբական արշավանքների պայմաններում ի վիճակի չէր սրելու հարաբերությունները հայերի հետ։ Ուստի Հերակլ I-ը հայ իշխանների միջնորդությամբ Դավիթ Սահառունուն տալիս է կյուրոպաղատության աստիճան և նշանակում Հայաստանի իշխան[56] (635—638)։ Կայսրության շահերի տեսակետից տվյալ դեպքում ավելի նպատակահարմար էր ունենալ զորքի և նախարարների համար ընդունելի, ընդունակ ու ձեռներեց կառավարիչ, ինչպիսին էր Դավիթ Սահառունին, քան Մժեժ Գնունու նման մեկը, որը մի կողմ թողած խելամիտ ու ճկուն միջոցները, անտեսելով հայ նախարարների ցանկությունները, երկիրը կառավարում էր կամայական ու բռնի միջոցներով։ Ահա թե ինչու Կ. Պոլսի արքունիքը, առանց երկմտելու, հաշտվում է Մժեժ Գնունու սպանության հետ և Հայաստանի բյուզանդական մասի իշխանությունը վստահում է Դավիթ Սահառունուն, որը դառնում է նրա առաջին կյուրոպաղատը։ Վերջինս երկիրը կառավարում է ինքնիշխան կերպով և, պատմիչի ասելով՝ «ամս Ը ամենայն ճոխութեամբ մեծապէս», բայց այնուհետև մեկ

52 Տե՛ս «Narratio de rebus Armeniae», էջ 468—469։

53 Սեբեոս, I, 102։ Այստեղ պատմիչի մոտ տեքստի իմաստը, ինչպես նկատել են, պարզ չէ։ Ինչպե՞ս կարող էր կաթողիկոսը զինվորական կարգ սահմանել կամ ի՞նչ շտեմարաններ էր նա բաշխում ամբողջ երկրում, տարօրինակ է ու անհասկանալի (տե՛ս Себеос, История, Ереван, 1939, էջ 168, ծանոթ. 152)։

54 Լեո, Երկերի ժողովածու, 2, էջ 301։

55 Սեբեոս, էջ 104։

56 Նույն տեղում։ Հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 80։ Սեբեոսի այս տեղեկությունը հաստատվում է Դավիթ Սահառունու կառուցած Մրենի տաճարի 639 թ. արձանագրության հետևյալ հիշատակությամբ. «Ամիոյն քսան եւ իններորդի Հերակղի բարեյաջող թագաւորի յիշխանութեան Դաւթի, ամենազով պատրկի կուրապաղատի եւ սպարապետի Հայոց և Ասորոց» (տե՛ս Н. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ 401)։

համար անհայտ պատճառներով «անարդեալ ի զաւրացն՝ հալածեցաւ, և անմիսրան լեալ ամենայն ազատացն՝ կորուսին զերկիրս Հայոց»[57]։

Ինչո՞վ է վերջացել Դավիթ Սահառունու պաշտոնավարությունը բյուզանդական ծառայության մեջ և կյանքը, մեզ հայտնի չէ։ 1234 թ. կազմված ժամանակագրության անանուն ասորի հեղինակը հաղորդում է, որ հույների 951 (=639) թ. Դավիթ Հայի հրամանատարությամբ հայկական զորքը արշավել է դեպի Միջագետք՝ արաբների դեմ։ Այդ կարևոր տեղեկությունը օգտագործված չէ պատմական ուսումնասիրություններում։ Անհրաժեշտ ենք համարում մեջբերել անանուն ժամանակագրի մոտ եղած համապատասխան հատվածը բառայի. «Այն ժամանակ դուրս եկավ Դավիթ հայը, հոռոմների զորապետը, իր երկրից և Վալենտին անունով մի այլ մարդ՝ արևմուտքից։ Նրանք միմյանց դեսպաններ ուղարկեցին (տեղեկացնելով— Վ. Բ.), որ մեկը կգնա արևելքից, մյուսը՝ արևմուտքից. և արաբները ճակատամարտում կկորցնեն բոլորը, ինչ կա Ասորիքում։ Արաբները տեղեկանալով, նախապատրաստվեցին և առաջինը գնացին Վալենտինի վրա և ճակատամարտում հաղթեցին ու ոչնչացրին նրա ամբողջ զորքը։ Իսկ Դավիթը գնաց և հասավ Միջագետք և իմացավ, որ այդ մարզում արաբներ չկան, որովհետև նրանք մեկնել էին Վալենտինի հետ եղած հոռոմներին կողոպտելու համար։

Երբ եկավ Դավիթ հայը, բանակեց Բետ-Մաադա կոչված գյուղի մոտ։ Շատ չարությունների ավելացման հետ զորքերը Դավթի հետ դուրս եկան և սկսեցին կողոպտել մարդկանց և նրանք ոչինչ չթողին. խիստ տառապանք պատճառեցին տղամարդկանց և կանանց, երկրում թաքցված գործերը հայտնի դարձնելու համար։ Եվ ուրիշ ոչինչ չէր լսվում աղաղակից ու լացից, արցունքից ու պանգատից բացի, նամանավանդ աղնվականների կանանցից և մեծաղարմ դուստրերից, որոնց նրանք ապականում էին կենակցելով և անամոթությամբ ու դա անում էին բայեիրաց, առանց ամոթի, նրանց ամուսինների և բոլորի աչքի առաջ։

Զինվորականներից նրանց հետ կար Տիտ անունով մի տղամարդ, որը քաղաքներից մեկի զորապետն էր. նա, որ ծագումով ասորի էր, դուրս եկավ և գնաց նրա հետ։ Երբ նա տեսավ Դավիթ հայի ընկերների պատճառած չարությունը, մոտեցավ նրան և ասավ. «Ճիշտ չէ, որ դու լինելով քրիստոնյա և ծառայելով քրիստոնյա թագավորի, քրիստոնյաների դեմ գործադրում ես ավերածությունները և թույլ ես տալիս քո զինվորներին սպանելու քրիստոնյաների, մեղք գործելով Հոռոմների պետությանը և երբ թագավորը լսի այդ քեզ չի գովաբանի»։ Այն ժամանակ Դավիթ հայը հրամայեց, որպեսզի տեղական բնակիչներին ոչ ոք չարիք չպատճառի»։

Դավթի հայ զինվորները, լուր ստանալով Դամասկոսի մարզից արաբական զորքի գալու մասին, վախից թողնում են Միջագետքում ձեռք բերած ավարը և փախչում, բայց արաբները նրանց հետապնդում են և անխնա սրի քաշում։ Դավիթը զինվորական օգնություն է խնդրում Տիտ զորավարից, որը, սակայն, հրաժարվում է համագործակցելուց և հեռանալով նրանից, փրկվում։ «Իսկ Դավիթն ամբողջ զորքի հետ զոհվեց ճակատամարտում, երբ սրով ոչնչացնում էին, այնպես որ նրանցից ոչ մեկը (կենդանի— Վ. Բ.) չմնաց», եր-

57 Սեբեոս, էջ 104։ Դավիթ Սահառունին, Սեն-Մարտենի ասելով, իր պաշտոնից հեռացվել է 633 թ. (Mémoires historiques et géographiques sur l'Arménie. Paris. 1818, t. 1, էջ 336), որը ճիշտ չէ։

բափակում է ասորի ժամանակագիրը Դավիթ Հայի հետ կապված պատմությունը[58]։

Այս տեղեկությունից մենք իմանում ենք, որ Դավիթը հայ է, բյուզանդական զորավար, 639 թ. Վաղենտիանոս զորավարի հետ համաձայնեցված հայկական զորքով արշավել է արաբների դեմ «իր երկրից», «արևելքից» դեպի Միջագետք և իր զինվորների հետ զոհվել կռվում։ Ով է այս Դավիթ Հայը. արդյոք որևէ ընդհանրություն ունի՞ Հայաստանը տվյալ ժամանակի բյուզանդական կառավարիչ կյուրոպաղատ Դավիթ Սահառունու հետ, թե ոչ։ Աղբյուրներում, դժբախտաբար, չկան անհրաժեշտ փաստեր պարզելու «Դավիթ Հայի» անձնավորությունը։

Աղբյուրները որոշակի տեղեկություն չեն հաղորդում Դավիթ Սահառունու մասին։ Նա սպանել է Մժեժ Գնունունն և որպես Հայաստանի բյուզանդական մասի կառավարիչ, կառավարել է ըստ Սեբեոսի «ամս Գ»[59], ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ «ամս Դ»[60]։ Սուրեն մարզպանի սպանությունից (572 թ.) հետո, Ստ. Ասողիկի ասելով, պարսից թագավորը Հայաստանում այլևս մարզպան չի նշանակում, «այլ ի խնդրոյ նախարարացն իշխան հաստատէ Հայոց զ՝Դավիթ Սահառունի, որ կալաւ զհաղարապետութիւն Հայոց ամս Լ հրամանաւ Որմզդի, որդւոյ Խոսրովու Պարսից արքային»[61]։ «Իսկ զկնի Դաւթի Սահառունւոյ եկաց իշխան Հայոց Թէոդորոս Ռշտունի ամս Իե»[62]։ Ըստ Սամվել Անեցու տեղեկության՝ «ՈԺԱ (=611)։ (ԾԸ)=58+551=609)։ Յետ մարզպանացն սպանման ճիհր Բուզանայ՝ ճիհր Վշնասպուհենայ, ճիհր Վզովն Միհրանայ, և այլոց Տաճկաստանեաց՝ Դավիթ Սահառունի՝ ամս Լ»[63]։ Ստ. Օրբելյանի վկայությամբ, Բրիստափորին հաջորդում է Եղր կաթողիկոսը, «ամս 10»։ «Ապա յերրորդ ամի կաթողիկոսութեան սորա, մինչ վախճանեալ էր Դավիթ Սահառունի, և առեալ զմարզպանութիւնն Հայոց Թէոդորոս Ռշտունի»[64]։ Եղրը աթոռակալել է 630 թ., ուրեմն 633 թ. Դավիթ Սահառունին այլևս չկար։ Մինչդեռ, ինչպես գտնում ենք, նա բյուզանդական կառավարիչ է եղել 631—636[65] կամ ավելի ճիշտ 635—638 թթ.[66]։ Դավիթ Սահառունին Արևելյան Հայաստանի մարզպան է եղել 635 թ. առաջ, այնուհետև Արևմտյան Հայաստանի բյուզանդական կառավարիչ։ Նրա մահվան թվականը դժվար է ստույգ որոշել[67]։

---

58 Տե՛ս Н. В. Пигулевская, Византия и Иран на рубеже VI и VII веков. М.—Л., 1946, էջ 287—288։ Դավիթ Հայի Վաղենտիանոս զորավարի հետ արաբների դեմ ձեռնարկած արշավանքի մասին տեղեկություն է հաղորդում XII դ. պատմիչ Միխայել Ասորին իր ժամանակագրության մեջ, բայց զգալիորեն տարբեր ձևով։ Այս երկում, ինչպես կտեսնենք ստորև, արշավանքը տեղի է ունենում Կոստաս կայսեր (641—668) օրոք։ Վաղենտիանոսը սպանվում է արաբների կողմից Կիլիկիայում, իսկ Դավիթը, որը գնում է «վերին կողմամբն», բյուզանդական զորքով կողոպտում է քրիստոնյա բնակչությանը և զորքի հետ ետ վերադառնում Կ. Պոլիս։

59 Սեբեոս, էջ 104։

60 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 80։

61 Ստ. Ասողիկ, էջ 86։

62 Նույն տեղում, էջ 88։

63 Ս. Անեցի, էջ 77—78։

64 Ստ. Օրբելյան, էջ 114։

65 Տե՛ս Միխայել Ասորի, էջ 311, ծանոթ. 3։

66 Կ. Բասմաջյան, Ժամանակագրական պատմութիւն Հայոց, էջ 4։

67 Դավիթ Սահառունին, ինչպես կարծում են, մահացել է 639 թ. (տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, 2, էջ 734—735, ծանոթ. 77)։

Սեբեոսը, դժբախտաբար, չի հաղորդում հետագա իրադարձությունների մասին, որոնք երկրում առաջացրին քայքայում, անկում, որի գլխավոր պատճառը բյուզանդական տիրապետությունն էր։ Բյուզանդիան թուլացել էր ռազմականապես, իսկ Հայաստանը զրկվել էր թշնամուն դիմադրավելու անհրաժեշտ ունակությունից։

VII դարում խիստ ծանրանում է Բյուզանդիայի ներքին և արտաքին դրությունը։ Դանուբյան սահմանից շարունակվում են սլավոնական ցեղերի ներխուժումները և գաղութացումը Բալկաններում, որտեղ նրանք կազմակերպում են մի շարք իշխանություններ։ Իսկ հարավից Բյուզանդիային այդ ժամանակ սպառնում էր արաբական էքսպանսիայի վտանգը։

* * *

Հերակլ I-ը և հաջորդ կայսրերը արաբական արշավանքների վերահաս վտանգի պայմաններում Փոքր Ասիան, ապա ամբողջ Բյուզանդիան բաժանում են վարչական նոր միավորների՝ թեմերի, զորավար ստրատեգների գլխավորությամբ, որոնք օժտված էին թե՛ զինվորական, և թե՛ քաղաքացիական իշխանությամբ։ VII դարում, ինչպես գտնում են, Ասիայում և Արևմտյան Հայաստանում կազմակերպվում են հետևյալ թեմերը. «1. Օպսիկիոն (Բիթինիա), 2. Անատոլիկոն (Ա. Հայք և Պոնտոս), 3. Արմենիակոն (Ա. և Բ. Կապադովկիա և Գ. Հայք), 4. Թրակեզիոն (Ասիա հին նահանգը), 5. Կիբիրայոտիսի Տրունդարիատը (ծովապետությունը) (Պամփիլիա և Պիսիդիա)[68]։

VII դարում Փոքր Ասիայում կազմակերպված ընդարձակ Արմենիակոն (Armeniakon) թեմի զորամասերը նախապես հայերից էին բաղկացած[69]։

Պետությունը թեմերի բաժանելու նպատակն էր ուժեղացնել վարչական կենտրոնացումը և կառավարումը, որը, սակայն, կայսրությանը չփրկեց տերիտորիալ մեծ կորստից։ Արաբները գրավում են բյուզանդական արևելյան նահանգների մեծ մասը և ցույց տալիս իրենց ռազմական անվիճելի գերազանցությունը կայսրության նկատմամբ։ Բյուզանդական անմարտունակ բանակը անընդհատ նահանջում էր, թշնամուն թողնելով նահանգ նահանգի ետևից։

640 թ. գարնանը արաբները Հյուսիսային Միջագետքից ներխուժում են Ջորրերը։ Հայք, Տարոն, ապա Վանա լճի ավազանից մտնում են Այրարատ, հոկտեմբերի 2-ին պաշարում են Դվինը, իսկ հոկտեմբերի 6-ին գրոհով գրավելով քաղաքը, կողոպտում, ավերում և հարուստ ավարով ու բազմաքանակ գերիներով հեռանում են Հայաստանից։ Արաբները երկրում չեն հանդիպում կազմակերպված որևէ ռազմական ուժի լուրջ դիմադրության։ Միայն Թեոդորոս Ռշտունին՝ Մարզպանական Հայաստանի սպարապետը, Կոգովիտում իր փոքրաթիվ զորախմբով փորձում է հեռացող արաբներից խլել հափշտակված ավարը և ռազմագերիներին, բայց կրում է ծանր կորուստներ և ետ քաշվում։

Թ. Ռշտունու արաբների վրա ձեռնարկած այդ հանդուգն հարձակումը բարձրացնում է նրա հեղինակությունը Բյուզանդիայում։ Նա Հայաստանում արդեն ազդեցիկ քաղաքական և զինվորական գործիչ էր, որին կայսրությունը

---

68 Տե՛ս Հ. Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրերի պատմության, էջ 127, ծանոթ. 1։ Հմմտ. A. Vanillev, Histoire de l'Empire Byzantin. t. I. Paris. 1932, էջ 300, 302; Ш. Диль, История Византийской империи, Москва, 1948, էջ 52։ P. Charanis, The armenians in the Byzantine Empire, Lisbon, 1963, էջ 19։

69 P. Charanis, նշվ. աշխ., էջ 21։

ձգտում էր իր կողմը գրավել՝ հայերի զինական ուժն արաբների դեմ օգտագործելու և բյուզանդական տիրապետությունը երկրում ամրապնդելու համար։ Ընդ որում հայ անվանի զորավարը այնուհետև ոչ թե ենթարկվում է կայսրության թելադրանքին, այլ գործում է իր կամքով, հիմք ընդունելով ժողովրդի շահերը, այսուհանդերձ՝ «իսկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսրէ հրաման հասեալ զաւրավարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեառն՝ հանդերձ պատրաստութեան պատուով»[70]։ Թեոդորոս Ռշտունին պատրիկության պատիվ է ստացել և Հայաստանի զորավար նշանակվել արաբների կողմից Դվինը գրավելուց քիչ հետո, հավանաբար, 641 թ.։ Նա Հայաստանում, ինչպես գտնում են, բյուզանդական կառավարչի պաշտոնը վարում է 641—646 թթ.[71]։ Աղբյուրներում արաբների դեմ Հայաստանում բյուզանդական զորքի գործողությունների մասին ոչ մի տեղեկություն չունենք։ Եվ դա պատահական չէ։ Իրադարձությունների ժամանակակից Սեբեոսը հաղորդում է հետևյալ ուշագրավ փաստը. «Մեռաւ Երակղոս, և թագաւորեաց որդի նորա Կոստանդին։ Եւ ոչ ոք ընտրեցաւ զաւրավար յաշխարհին Հայոց. քանզի անմիաբան լեալ իշխանացն՝ մեկնեցան ի միմեանց»[72]։ Ուրեմն հայ իշխանների անմիաբանության հետևանքով Հայաստանը չի ունեցել անգամ զորահրամանատար, որ կազմակերպեր երկրի զինվորական ուժերը թշնամու դեմ։ Հայաստանում ֆեոդալական խմբավորումների միջև պարբերաբար տեղի էին ունենում երկպառակություններ և երկրում փաստորեն ոչ իշխանություն գոյություն չուներ։

Կոստանդին III կայսրը (641 թ.) բյուզանդական զորքի հրամանատար է նշանակում հայ անվանի զորավար Վաղենտիանոս Արշակունուն և հրամայում է նրան՝ անհապաղ մեկնել արևելք։ Նա, Ներսես Գ իշխանցի կաթողիկոսի (641—661) միջնորդությամբ, Հայաստանի զորահրամանատար է կարգում Թեոդորոս Ռշտունուն և նրան տալիս պատրիկի բարձր պատվաստիճանը[73]։ Քանի որ Թեոդորոս Ռշտունին մինչ այդ նաև Արևելյան Հայաստանի սպարապետն էր, հետևաբար այժմ նա դառնում է ամբողջ երկրի հայկական զինվորական ուժերի տնօրինողը։

Կոստաս կայսրը[74] (641—668), Միխայել Ասորու վկայությամբ, իր գահակալումը սկսում է արևելքում, մասնավորապես արաբների դեմ ծավալելով պատերազմական ակտիվ գործողություններ. «Եւ թագաւորն Կոստոս ժողովեաց զօրս և արար բաժինս երկուս, զմիսն ետ 'ի ձեռս Հայկազնոյ ումեմն, որում անունն Դաւիթ էր, և զմիսն 'ի ձեռս Վաղինեայ, որ գնաց ընդ Կիլիկիա և սպանաւ 'ի Տաճկացն որք եկեալ էին հնազանդել զԿիլիկիա, և ելին ընդդէմ նորա և սպառեցին զՅոյնսն, սակաւ ինչ թողեալ փախստեայս։ Եւ Դաւիթ գնաց վերին կողմամբն. և զորքն Հռոմայեցիք որք ընդ նմա, ոչ ինչ պակաս քան զՀաղարացիսն գործէին կողոպտելով զքրիստոնեայսն, և առնուին ոսկի և արծաթ և հանդերձս, այլ և զկանայս խայտառակէին յանդիման արանցն»[75]։

Վաղենտիանոսի հարձակումը նպատակ է ունեցել Կիլիկիան ետ գրավել

---

70 Սեբեոս, էջ 110։

71 Կ. Բասմաջյան, ժամանակագրական պատմութիւն Հայոց, էջ 4։

72 Սեբեոս, էջ 109, հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 82։

73 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 84։

74 Հերակլի մահվանից հետո նրան հաջորդեցին երկու որդիները՝ Կոստանդին և Հերակլեոն, սակայն շուտով Կոստանդինը մնաց միակ կայսր։ Հայտարարվեց նրա որդին՝ Կոստաս II (641—668)։

75 Միխայել Ասորի, էջ 311—312։

արարներից, բայց այն ավարտվել է բյուզանդական զորքի խայտառակ պարտությամբ։ Դավիթ զորավարի արշավանքը, ինչպես տեսնում ենք, կրել է ավարառուական բնույթ։ Այդ արշավանքի պատճառը մեզ հայտնի չէ։ Տուժած քրիստոնյա բնակչությունը, նույն ժամանակագրի ասելով, բողոքում է բյուզանդացիների ասպատակությունների ու բռնությունների դեմ ու հայազգի զորավարը իր զորքով վերադառնում է Կ. Պոլիս։ Աղբյուրներում այս իրադարձության վերաբերյալ մենք այլ տեղեկություն չունենք։ Դավիթ հայկազն զորավարը, Սիխայել Ասորու ժամանակագրության հրատարակիչների կարծիքով[76], Դավիթ Սահառունին է, որին Հերակլ I կայսրը Հայաստանի կյուրոպաղատ է նշանակել 631 թ., իսկ Վաղենտիանոսը Սեբեոսի մոտ հիշատակված Վաղենտիանոս Արշակունին է, որն օգնեց դահակալելու Կոստաս II-ին։ Իրականում, մեկ թվում է, այդպես չէ։ Կոստաս II կայսրը, ինչպես հայտնի է, կառավարել է 641—668 թթ., իսկ Դավիթ Սահառունին կյուրոպաղատ է եղել 635—638 թթ., հետևաբար նրանք գործել են տարբեր ժամանակներում։

Այդ ժամանակ աքսորից վերադարձած Վարազտիրոց Բագրատունին նշանակվում է Հայոց իշխան, սակայն տեղ չհասած մեռնում է և Հայաստանում զինվորական ու քաղաքական ասպարեզում կենտրոնական դեմքը մնում է Թեոդորոս Ռշտունին։ 643 թ. արաբները նորից են ներխուժում Հայաստան, իսկ Թեոդորոս Ռշտունին և Հայաստանում բյուզանդական զորքի հրամանատար Պրոկոպիոսը պարտվում են։

Դրանից մի քանի տարի անց արաբները կրկին հարձակվում են Հայաստանի վրա, բայց Արտավ բերդի պաշարման ժամանակ Թեոդորոս Ռշտունին հաղթում է նրանց և փախուստի մատնում։ Չնայած Թեոդորոսի համառ դիմադրությանը արաբներին և համագործակցությանը Բյուզանդիայի հետ, վերջինս նենգ վերաբերմունք է ցուցաբերում. Պրոկոպիոս զորավարը թշնամանում է նրան, իսկ Կ. Պոլսից ուղարկված Թումա անունով մի ոմն պաշտոնյա նույնիսկ ձերբակալում է Թեոդորոսին, թեև կայսրը անմիջապես արդարացնում է նրան և վերահաստատում իր պաշտոնի մեջ։

Արաբական երկու արշավանքները զգալի ավերածություններ էին գործել Հայաստանում։ Այն ժամանակ, երբ երկրի վրա գնալով ուժեղանում էր արաբների նոր ներխուժման սպառնալիքը, կայսրությունը փոխանակ հոգ տանելու Հայաստանի պաշտպանության ամրապնդման, հայ-բյուզանդական հարաբերությունների բարելավման մասին, նորից է հայերին առաջարկում ընդունել քաղկեդոնականություն՝ սրելով դավանաբանական վեճերը և փոխադարձ թշնամանքը։

Քաղկեդոնականություն ընդունել տալը, որին դարեր շարունակ ձգտել է կայսրությունը, վերջին հաշվով նշանակում էր Բյուզանդիայի քաղաքական գերիշխանության ամրապնդումը Հայաստանում, քանի որ հեշտացնում էր հայերի լիակատար ձուլումը հունական-բյուզանդական տարրի մեջ։ Ուստի պատահական չէ, որ հայերը կայսրության դեմ մղած ազատագրական պայքարում հակաքաղկեդոնական-լուսավորչականությունը հաճախ պարզել են որպես դավանաբանական դրոշ, իրենց անկախության վերականգնման քաղաքական դրոշի կողքին[77]։ Ահա թե ինչու հայերի վրա քաղկեդոնականության բռ-

76 Տե՛ս նույն տեղում, էջ 311, ծանոթ. 3, էջ 312, ծանոթ. 1։

77 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 69։

նագաստությունը գործադրվում է նաև արտաքին մահացու վտանգի՝ արաբական արշավանքների ժամանակ։ Կայսրությունը դարձյալ կարծում է, թե հայերին, քաղկեդոնականացնելով ինքը կվերացնի հայ-բյուզանդական եկեղեցական անջրպետը և կամրապնդի արաբական արշավանքների հետևանքով զգալիորեն թուլացած իր տիրապետությունը Հայաստանում։

Ինչպես V—VI դդ. հայ ազատագրական շարժումների, այնպես էլ արաբա-բյուզանդական պատերազմների ժամանակ, երբ արյունահեղ գոտեմարտեր են մղվում մեկի կամ մյուսի գերիշխանության համար, արտաքին նվաճողների միջև կողմնորոշման խնդրի շուրջը հայ աշխարհիկ և եկեղեցական ֆեոդալական շրջաններում սկսում են առաջանալ ու որոշակիորեն կազմավորվել երկու տարբեր և իրար հակադիր ուղղություններ կամ խմբավորումներ։

Բյուզանդական արքունիքը և եկեղեցին հույս ունեին հայերի հետ դավանական միության հասնել օգտագործելով ոչ միայն Հայաստանում ունեցած քաղաքական իշխանությունը, զինվորական ուժը, այլև իրենց կողմնակից հայ աշխարհիկ ու եկեղեցական գործիչներին։ Երկրում բյուզանդական տիրապետության և քաղկեդոնիկ եկեղեցու հաստատման կողմնակից էր ժամանակի կաթողիկոս Ներսես Գ-ն, որը ծնվել էր Տայքի Իշխան գյուղում, բայց վաղ հասակում ապրել էր և կրթություն ստացել Բյուզանդիայում, յուրացրել հունարեն լեզուն ու գրությունը, կատարել զինվորական ծառայություն։ Սեբեոսը, որը համամիտ չէ Ներսեսի քաղաքական և եկեղեցական հայացքներին, նրա մասին հաղորդում է հետևյալը. «Զի էր նա բնակութեամբ ի Տայոց, ի գեղջէն, որում Իշխանն կոչեն։ Եւ սնեալ ի մանկութենէ յաշխարհին Յունաց և ուսեալ զլեզուս և զգրութիւն Հռոմին, և շրջեալ ընդ աշխարհս զաւրու կարգաւք զինուորութեան»[78]։ Բյուզանդական կրթությունն, անշուշտ, իր հայտնի դերն էր խաղացել նրա մեջ եկեղեցական տեսակետից քաղկեդոնական համոզմունք ձևավորելու, իսկ քաղաքականապես՝ դեպի կայսրությունը կողմնորոշելու հարցում։ VIII դարի քաղկեդոնական անանուն եկեղեցական պատմիչը ևս հաստատում է, որ «Նա (Ներսես Գ կաթողիկոսը—Վ. Ի.) համահաղորդակից էր հռոմայեցիների կայսեր»[79]։ Հովհաննես Մայրագոմեցի վանականը, ինչպես վկայում է IX դարի վրաց Արսեն Սափարեցի կաթողիկոսը, «Ներսեհին (Ներսեին) տեսել էր Հունաստանում հաղորդվելիս Կոստանդին Փոքր թագավորի հետ»[80]։

Ներսեսը Հայաստանում ազգային շահերին հակասող իր այդ հայացքները կարող էր արտահայտել միայն անհրաժեշտ պայմանների առկայության՝ բյուզանդական ազդեցության ուժեղացման դեպքում, ըստ այնմ էլ նվազում կամ շատանում էին նրա կողմնակիցները հայ եկեղեցական և աշխարհիկ ֆեոդալական շրջաններում։ Նրա համախոհները, ինչպես կտեսնենք, զգալիորեն ավելանում են, օրինակ, երբ Կոստաս II կայսրը զորքով արշավում է արևելք և կանգ առնում Կարին քաղաքում։ Դեպի Բյուզանդիա էին կողմնորոշվում և նրա օգնությանը ապավինում գերազանցապես Արևմտյան Հայաստանի հայ իշխանները և հոգևորականությունը, որոնք կայսրության տիրապետության տակ

78 Սեբեոս, էջ 143—144։

79 «Narratio de rebus Armeniae», 469։

80 Տե՛ս Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 46։

գտնվելով, ենթարկվել էին նրա ազդեցությանը և իրենց շահերով կապված էին նրա հետ։

Հայաստանում քաղաքական մյուս խմբավորման գլուխ էր կանգնել ժամանակի պետական և զինվորական ականավոր գործիչ, հմուտ դիվանագետ ու մեծ հայրենասեր Թեոդորոս Ռշտունին, որը արտաքին և ներքին քաղաքականություն որոշում է ելնելով երկրի և ժողովրդի շահերից։ Նա ստացել էր պարսկական կրթություն և պատմական փորձի հիման վրա չէր համակրում կայսրությանը, չնայած ընդհանուր առմամբ մինչև 652 թ. ամեն ջանք գործադրում է միավորելու հայ-բյուզանդական զինվորական ուժերը՝ արշավող արաբների դեմ։ Թեոդորոս Ռշտունին հավանաբար դեռևս չէր պատկերացնում արաբական էքսպանսիայի տարածման սահմանները և կայսրության ռազմական հնարավորությունները։ Բայց նա իր կողմնակիցների հետ պատերազմական գործողությունների և քաղաքական իրադարձությունների զարգացման ընթացքում ստիպված հանգում է այն հաստատ համոզման, որ պատերազմներում ռազմական գերազանցությունը անվիճելիորեն խալիֆաթի կողմն է և բյուզանդական տիրապետությունը Հայաստանում ապագա չունի։ Կայսրությունը լքել էր իր արևելյան նահանգները, իսկ անպաշտպան նախարարները դիմադրում էին արաբներին, հույս ունենալով զինվորական օգնություն ստանալ Բյուզանդիայից։ Բայց վերջինս, ընդհակառակը, ձգտում էր օգտվել հայերի ծանր դրությունից և միավորել եկեղեցիները[81]։ Կայսրությունը պատերազմական դադարի պայմաններում հայերին նորից էր ենթարկում եկեղեցական հալածանքի՝ քաղկեդոնականություն պարտադրելով։ Կ. Պոլսի արքունիքը և մոլեռանդ հույն հոգևորականությունը դարձյալ կարծում էին, թե արաբական վտանգի պայմաններում հայերի քաղկեդոնականացումը կամրապնդի բյուզանդական ազդեցությունը և տիրապետությունը Հայաստանում։ Այդ ժամանակ է, որ Ներսես կաթողիկոսը՝ քաղկեդոնականության և երկրում կայսրության տիրապետության կողմնակիցը, կառուցում է հոյակապ Զվարթնոց եկեղեցին, իր բնակության վայր դարձնելով նրան կից ապարանքը։

Հայերի եկեղեցական նոր հալածանքի առիթը, պատմիչի տեղեկության համաձայն, հանդիսանում է հետևյալը. Հայաստանում տեղավորված կայսրության զորքը դժգոհում է հայերից, որ նրանք հրաժարվում են բյուզանդացիների հետ հաղորդվելուց. «Սա արդ՝ զրեն նոքա ամբաստանութիւն առ թագաւորն Յունաց Կոստանդին և հայրապետն, թէ «իբրեւ զանաւրէնս համարեալ եմք յաշխարհիս յայսմիկ։ Քանզի անարգանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովն Քաղկեդոնի և զտումարն Լեւոնի, և նզովեն զնոսա»։ Յայնժամ հրաման ետ թագաւորն հայրապետաւն հանդերձ, և գրեն հրովարտակ առ Հայս, զի միաբանութիւն հաւատոյ արասցեն ընդ Հոռոմի, զի մի խոտեսցեն զժողովն և զտումարն դայնց»[82]։

Կայսեր հրամանով Հայաստան է գալիս աստվածաբան Դավիթը, որը Բագրևանդ գավառի Բաղավան գյուղից էր և լավ հմտացել էր փիլիսոփայության արվեստի մեջ։ Նա ուներ կոնկրետ հանձնարարություն՝ «Զի երթեալ ի

---

81 В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1940, էջ 58։

82 Սեբեոս, էջ 121, նաև Ասողիկ, էջ 91։

բաց Հաւացեն ղՃակառակութիւնն»[83], այսինքն՝ ստիպել Հայերին քաղկեդոնականություն ընդունել։

Դվինում գումարված եկեղեցական ժողովը[84], որին մասնակցում են բոլոր եպիսկոպոսները, նախարարները, Ներսես կաթողիկոսը և սպարապետ Թեոդորոս Ռշտունին, ընթերցում է կայսեր հրովարտակը, պատրիարքի կոնդակը և ունկնդրում Դավթին, «որ ուսուցանէր զերրորդութիւնն բաժանմամբ ըստ տումարին Լևոնի»[85]։ Ժողովի մասնակիցները միաձայն և վճռականորեն մերժում են քաղկեդոնականություն ընդունելու Կոստաս կայսեր առաջարկությունը, պատմիչի բառերով ասած, նրանք «չառին յանձն փոխել զճշմարիտ վարդապետութիւնն սրբոյն Գրիգորի՝ ըստ տումարին Լևոնի»[86]։ Կազմում են նրան ուղղված մի ընդարձակ պատասխան նամակ, որի տեքստն իր Պատմության մեջ ամբողջությամբ մեջ է բերել Սեբեոսը[87]։ Այդ նամակում, ի միջի այլոց, ընդգծվում է այն հանգամանքը, որ իրենց՝ Հայերի քրիստոնեական դավանանքը ավելի հին է, քան հռոմեացիներինը, որոնց մոտ այն պաշտոնապես սկզբնավորվում է Կոստանդին Մեծ կայսրից։ «Արդ ունիմք մեք հաւատս ոչ ի նորագունից սահմանեալ, այլ որպէս ընկալաք մեք ի սուրբ առաքելոցն ի ձեռն Հայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի, վարդապետելով զՏրդատ արքայ և զիշխանսն Հայոց աշխարհին, գոգցես եթէ Լ ամաւք յառաջ քան զԿոստանդիանոս։

83 Նույն տեղում։

84 Դվինում ժողովը, Կանոնագրքի տեղեկությամբ, հրավիրվել է «յամի չորրորդի Կոստանդիանոսի կայսեր» («Գիրք կանոնաց և դատաստանի. վերստին գաղափարեալ զգուշաւոր բաղդատութեամբ. գրչագիր թղթեայ», Կ. Պոլիս, 1831, էջ 135), այսինքն՝ 645 թ.։ Սեբեոսը խոսելով նույն կայսեր Հայաստան գալու մասին (652 թ.), նշում է, որ ժողովը եղել է «յառաջ քան զայս չորս ամաւք» (էջ 145), այսինքն՝ 648 թ., իսկ ըստ Հովհաննես Դրասխանակերտցու «երկու ամօք յառաջ» (էջ 87)՝ 650 թ.։ Երկու տարբեր թվականները (645 և 648) վերաբերում են երկու տարբեր ժողովների։ Մ. Օրմանյանի կարծիքով, մեզ հետաքրքրողը գումարվել է 648 թ. («Ազգապատում», էջ 712, 717)։ Բյուզանդական եկեղեցու պատմության մեջ նշվել է նաև Դվինի 645 թ. եկեղեցաժողովը, որը նույնպես նզովել է Քաղկեդոնի որոշումը (տե՛ս Pargoire, նշվ. աշխ., էջ 183)։

85 Սեբեոս, էջ 121։

86 Նույն տեղում։

87 Նույն տեղում, էջ 122—137։ Սեբեոսի մոտ եղած այս դավանական թուղթը, ակադ. Ստ. Մալխասյանցի կարծիքով, վավերագրական գրվածք չէ, որովհետև այն ոչ միայն սաստիկ աղավաղված է բառերի կողմից, այլև աչքի է ընկնում ամբողջ հատվածների կրկնությամբ, եռ և առաջ դասավորությամբ, փաստերի անճշտությամբ։ Հայ աշխարհիկ և եկեղեցական բարձր խավի կողմից կայսրին առաքվող գրությունը չէր կարող այդքան անփույթ կերպով կազմվել։ Ուստի, անվանի հայագետի ենթադրությամբ, այդ թուղթը եղել է «մի նախագիծ սևագիր», որը վերջնական խմբագրման չի ենթարկվել և լինելով անվավերական գրություն չի զետեղվել «Գիրք Թղթոց» պաշտոնական ժողովածուի մեջ։ Բայց Սեբեոսը հարկ է համարել այն դնել իր Պատմության մեջ անկատար և պակասավոր ձևով (տե՛ս Սեբեոս, էջ 191—192, ծանոթ. 64)։ Որ դավանական թուղթը չի ուղարկվել Կ. Պոլիս, երևում է նրանից, որ երբ ավելի ուշ Կոստաս II կայսրը գալիս է Դվին, մի հայ եպիսկոպոս նրա հետ տեղի ունեցած զրույցի ժամանակ ակնարկում է այդ թուղթը, կայսրին ասելով. «Եւ գիրն այն այժմ առ դմա է. հրամայեցէք խնդրել և տեսանել» (Սեբեոս, էջ 145)։ Սեբեոսը մասնակցել է Դվինի ժողովին, և ինչպես կարծում են, ինքն էլ գրել է նամակը, որին այդ պատճառով մեծ տեղ է տվել իր Պատմության մեջ (Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 718—719)։ Այդ նամակը մեջբերված է նաև Ստ. Ասողիկի «Պատմութիւն Տիեզերականի» մեջ, էջ 91—98, բայց պակասավոր ու աղճատված ձևով։ Այնուհետև, պատմիչը նախ խոսում է Կոստաս կայսեր Հայաստան գալու, Ներսես կաթողիկոսի հետ հաղորդվելու, ապա նոր հավատի թուղթ գրելու մասին, մինչդեռ իրականում նամակը գրվել է կայսեր Հայաստան գալուց չորս տարի առաջ (տե՛ս Ստ. Ասողիկ, էջ 353—354, ծանոթ. 80)։

նաև սուրբն Հեսոնդ մեծ արքեպիսկոպոսն Կեսարու, ուր սնեալ և ուսեալ էր սուրբ Գրիգորիոս, որ և ձեռնադրեացն իսկ զնա ի քահանայապետութիւն, և նա գնոյն հաստատեաց զաւանդութիւն»[88]։ Նամակում նշվում էր, որ հայերին կրոնափոխելու փորձեր շատ են կատարել պարսկական չար ու անօրեն արքաները[89]։

Հայոց եկեղեցին հաստատուն և անսասան էր իր դավանանքին ու մերժում է քաղկեդոնականությունը։ Նման որոշման համար պայմանները միանգամայն նպաստավոր էին. կայսրությունը այդ ժամանակ դինվորական խոշոր ուժեր չուներ Հայաստանում։ Կայսեր նամակի քննարկման ընթացքում և նրան կտրուկ մերժողական պատասխան կազմելիս, ժողովն ամբողջությամբ գտնվել է Թեոդորոս Ռշտունու ազդեցության տակ, որի թելադրանքին, իրենց կամքին հակառակ, ենթարկվել են նաև Ներսես կաթողիկոսն ու նրա համախոհները։ Պատասխան նամակի առաքումը, մեզ համար անհայտ պատճառներով, հետաձգվել է և ի վերջո չի ուղարկվել Կոստաս II-ին, բայց, անկախ դրանից. Դավիթ Բագավանեցին՝ Կ. Պոլիս վերադառնալով, անշուշտ, ժողովի մասին հանգամանորեն տեղյակ է պահել կայսրին և պատրիարքին։

Արաբական արշավանքների ժամանակ, ինչպես իրավացիորեն ընդունում են, Հայաստանը գրեթե ձևականորեն էր գտնվում բյուզանդական իշխանության տակ, իրականում երկիրը կառավարում էր Թեոդորոս Ռշտունին, որը մինչև VII դ. 50-ական թթ. սկիզբը պայքարում էր արաբների դեմ, ձգտելով Հայաստանի անկախությանը[90]։ 648—652 թթ. ընթացքում հայերը աստիճանաբար հեռանում են Բյուզանդիայից և վերջնականապես խզում իրենց կապերը նրա հետ։ Չկարողանալով հասնել անկախության, նրանք, ի վերջո, հանգում են այն համոզմանն, որ ստեղծված բարդ քաղաքական իրադրության պայմաններում պետք է կողմնորոշվել երկու նվաճողների միջև, ընտրել, այսպես ասած, չարիքների փոքրագույնը։ Երկրի և ժողովրդի շահերի տեսակետից տվյալ պահին միանգամայն հեռատես ու ճիշտ քայլ էր երես դարձնել կայսրությունից և դաշինք կնքել Արաբական խալիֆայության հետ[91]։

Թեոդորոս Ռշտունին, խորհրդակցելով և համագործակցելով Վրաստանի ու Աղվանքի ֆեոդալական աղնվականության հետ, բանակցություններ է վարում Ասորիքի արաբական կառավարիչ Մոավիայի հետ և 652 թ. պայմանագիր կնքում[92]։

Հայ-արաբական դաշինքից մեծ վնաս էր կրում Բյուզանդիան, որի դեմ էր ուղղված այն։ Կայսրությունը, չկարողանալով հայերին դիվանագիտական միջոցներով իրեն ենթարկել, դիմում է ռազմական ուժի օգնությանը։ 652—653 թթ. Կոստաս կայսրը, պատմիչի ասելով, 100000-անոց բանակով արշավեց Հայաստան, երկիրը իրեն ենթարկեց և հայ հոգևորականությանն ստիպեց ծառայելու քաղկեդոնականությանը սոսկ զենքի ուժով։ Սակայն Թեոդորոս Ռշտունին դդալի թվով հայ նախարարների պաշտպանությամբ և վրաց ու աղվանից համագործակցությամբ անհաշտ դիրք գրավեց Բյուզանդիայի հանդեպ։

---

88 Սեբեոս. էջ 129։
89 Նույն տեղում, էջ 122։
90 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 71։
91 Ստ. Ասողիկ. էջ 89։
92 Սեբեոս. էջ 140—141։

Օսման խալիֆայի հրամանով Հարիր իբն Մասլամա զորավարը 654 թ. ներխուժեց Հայաստան։ Հայ իշխանները դիմադրություն ցույց չտվեցին, իսկ բյուզանդական զորքը Մավրիանոսի հրամանատարության տակ պարտություն կրեց և փախավ։ Երկիրը նվաճելուց հետո արաբները Ասորիք են տանում մեծ ավար և պատանդներ, որոնց միանում է նաև Թեոդորոս Ռշտունին։ Հայ մեծ զորավարը և հայրենասերը մահանում է այնտեղ հավանաբար 656 թ. և բերվում թաղվում է հայրենի երկրում։

Այսպիսով VII դ. 40—50-ական թթ. Հայաստանը դառնում է արաբա-բյուզանդական ռազմական ուժեղ բախումների ասպարեզ։ Հայերը կենաց և մահու պայքար մղելով օտար զավթիչների դեմ, միաժամանակ ձգտում էին օգտվել նրանց մրցակցությունից երկիրը ավերածությունից ու սրածությունից զերծ պահելու համար։ Բայց հայ ժողովուրդը չի կարողանում վերականգնել իր ազգային անկախ պետականությունը, որովհետև երկիրը, նրա զինվորական ուժերը մասնատված էին, չէին դադարում ֆեոդալական երկպառակությունները, իսկ նվաճող արաբական հորդաները անհամեմատ ուժեղ էին։

АРМЯНО-ВИЗАНТИЙСКИЕ ОТНОШЕНИЯ В VII В.—В ПЕРИОД ПЕРВЫХ АРАБСКИХ ПОХОДОВ

В. К. ИСКАНЯН

(Резюме)

Накануне арабских нашествий большинство армянских земель находилось в составе Византии. После договора Византии с Ираном в 628 г. правителем Византийской Армении был назначен Мжеж Гнуни — активный проводник церковной политики Византии.

Что же касается Персидской Армении, то положение там было столь тяжелым, что армянские нахарары предпочитали переселяться в византийскую часть Армении.

Начиная с 640 г. благодаря арабским походам в Армению ослабевает позиция Византии в Армении, хотя император Констант II пытается продолжить старую политику Византии, целью которой было заставить армян принять решения Халкедонского собора.

В этих сложных условиях ишхан Армении Теодорос Рштуни возглавляет борьбу армян не только против арабов, но и против Византии за достижение и упрочение самостоятельности Армении.